ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2018 թ.
№ 11 (1028)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Մանկավարժական համալսարանն այս ուսումնական տարում իր դռները բացեց առկա համակարգում սովորող բակալավրիատի 547 և մագիստրատուրայի շուրջ 600 առաջին կուրսեցիների առջև: Համալսարանի բոլոր ֆակուլտետներում առաջին օրվա մուտքը տոնական էր, հուզիչ, անակնկալներով լի: Ջերմ ու սրտառուչ մթնոլորտում առաջին կուրսեցիների հետ անցկացված հանդիպումները ճանաչողական բնույթ էին կրում. ֆակուլտետների ղեկավարները, ամբիոնների վարիչները և դասախոսները ուսանողներին ներկայացրին իրենց ֆակուլտետների ու մասնագիտությունների առանձնահատկությունները: Նոր ուսումնական հաստատություն, նոր դասախոսներ, նոր ընկերներ ու նոր միջավայր...Սակայն յուրաքանչյուր ելույթ շուտով փարատում էր նորեկների ներքին անհանգստություններն ու տագնապները, որովհետև միջավայրի ջերմությունը փոխանցվում էր նրանց՝ վստահություն ներշնչելով նախընտրած բուհի ու պրոֆեսորադասախոսական կազմի հանդեպ:

➤2

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՐԿԱՆԻՇՆ ՈՒ ՈՐԱԿԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՍ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

Նոր ուսումնական տարվա շեմին Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Առաջինը խոսեց աշխատողների բժշկական ապահովագրությունը վերսկսելու մասին, ապա հակիրճ տեղեկատվություն հաղորդեց ընդունելության, ուսման վարձավճարների, դասախոսական ժամերի և այլ հարցերի շուրջ:

Ռեկտորը փաստեց, որ այս տարի ուսանողների քանակը զգալիորեն նվազել է, ինչը պայմանավորված է 12-ամյա կրթության հանգամանքով, թեև Մանկավարժականը ուսանողների ընդունելության թվով հանրապետությունում երկրորդն է: Կանխատեսվում է, որ հաջորդ տարի Հայաստանում 3-3,5 անգամ ուսանողների թվի աճ կգրանցվի:

Ռ. Միրզախանյանն ընդգծեց, որ ֆինանսական դժվարությունների տեսանկյունից այս տարին ամենադժվարն է բուհի համար, ահա ինչու շինարարական որևէ ծախս ընթացիկ տարում չի նախատեսվում:

Որպեսզի դասախոսների կրճատումներ չլի-

➤2

«ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԿՈՉՈՒՄ Է»

Ավարտվեց սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա ծրագիրը, որին այս տարի մասնակցում էր 16 երկրից 62 ուսուցիչ: Այս տարի վերապատրաստումներն իրականացվեցին 6 ուսումնական խմբերում՝ մանկապարտեզի, տարրական ուսուցման, մեկօրյա դպրոցների, հայոց լեզվի ու գրականության դասավանդման, լրացուցիչ կրթության կազմակերպման և հայոց պատմության ուղղություններով:

Սփյուռքահայ ուսուցիչներին շնորհավորեց և հավաստագրեր հանձնեց ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը՝ վստահեցնելով, որ կրթական գործընթացներում մշտապես պատրաստ է աջակցել սփյուռքահայ ուսուցիչներին:

«Դուք ձեր գիտելիքներով և փորձով կերտում եք հայ մարդուն թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում: Սփյուռքահայ ուսուցչական կադրերի, մասնագիտական կարողությունների պատրաստման ու վերապատրաստման գործընթացների կատարելագործումը կարևորագույն խնդիրներից մեկն է»,- նշեց նախարարը՝ հավելելով, որ 2000 թվականից անցկացվող վերապատարստումների արդ-

➤3

«Ամառային դպրոց-2018». «Կրթություն, ժառանգություն և հնարավորություններ»

Ավարտվեց Մանկավարժական համալսարանի կազմակերպած հերթական միջազգային «Ամառային դպրոցը», որը Հայաստան բերեց ավելի քան 80 օտարերկրյա ուսանողների, որոնք դարձան հայկական մշակույթի, արվեստի ու պատմության հերթական դեսպաններն իրենց երկրներում:

Մանկավարժական համալսարանն արդեն վեցերորդ անգամ անցկացնում է ուսանողների փոխանակման, ուսումնակրթական, ժամանցային, միջազգային այս ծրագիրը: «Ամառային դպրոց-2018» միջազգային ծրագրին այս տարի մասնակցեց ավելի քան 80 ուսանող ՀՊՄՀ-ից և արտասահմանյան գործընկեր համալսարաններից՝ Լիտվայից, Ֆինլանդիայից, Հունգարիայից, Բելառուսից, Ռուսաստանի Դաշնությունից, Չինաստանից և Արցախի Հանրապետությունից: 10 անմոռանալի, հետաքրքիր և հագեցած օրերը գեղեցիկ ձեռնարկով էլ ամփոփվեց ՀՊՄՀ-ի Աղավնաձորի ուսումնական բազայում:

Համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց մասնակիցներին ծրագրի արդյունավետ անցկացման առթիվ: Ռեկտորը կարևորեց ոչ ֆորմալ կրթության դերը ուսանողների զարգացման և կրթման գործընթացում:

➤4

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՐԿԱՆԻՇՆ ՈՒ ՈՐԱԿԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՍ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

➤1 նեն, դասախոսի ծանրաբեռնվածությունը 100 ժամով նվազեցվել է:

«Արդեն 6-րդ տարին է, ինչ համալսարանն իրականացնում է «Ամառային դպրոց» ծրագիրը, որը ևս կապված է ֆինանսական որոշակի ծախսերի հետ»,-ասաց ռեկտորը՝ ընդգծելով, որ աշխարհի առաջատար համալսարանների ուսանողները մեր բուհի կազմակերպած այդ ծրագրին մասնակցում են իրենց ֆինանսական միջոցներով:

Ռեկտորի ելույթը որոշակի շեշտադրումներ ուներ. ամբիոնները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությանը, ուսանողներին պետք է փոխանցել ինքնուրույն մտածելու կարողություններ, առաջին կուրսից

սկսած պետք է ուսանողներին բացատրել, որ ուրիշի մտքերն իրեն վերագրելը գրագողություն է, և, ի վերջո, ուսանողը պետք է ընտրի այնպիսի թեմա, որի ուսումնասիրումը հետաքրքրություն կառաջացնի, google classroom-ին մոտեցումները տարբեր են, սակայն դա անընդհատ կատարելագործման ու զարգացման գործընթաց է, և եթե ուզում ենք առաջ նայել և աշխարհի համալսարանների համար հետաքրքիր լինել, պետք է շարունակաբար բարեփոխել այն:

Ռեկտորը նաև հեռանկարային իր մի քանի դիտարկումները ներկայացրեց դասախոսների աշխատավարձերի և ուսանողների ուսման վարձերի հնարավոր փոփոխությունների շուրջ:

Ռեկտորն ամփոփեց ասելիքը՝ ներկաներին հորդորելով սիրել համալսարանը, որի վարկանիշն ու որակը կախված է յուրաքանչյուր աշխատողից:

Այո, պետք է սիրել աշխատավայրը, հարազատ բուհին նվիրումը դարձնելով աշխատելու և ապրելու կերպ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

➤1 Ինչպես գիտենք, այս ուսումնական տարին առաջինն էր 12-ամյա կրթությամբ շրջանավարտների համար, հետևաբար ուսանողների թվի նվազեցում բնորոշ էր բոլոր բուհերին:

Գիտելիքի, գրի և դպրության օրվա առթիվ ուսանողներին, մանկավարժներին և կրթության բնագավառի ներկայացուցիչներին շնորհավորեց Մանկավարժական համալսարանի ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միհեր Մելիք-Բախշյանը: Կարևորելով ժամանակակից աշխարհում կրթության դերը՝ պրոռեկտորը առաջին կուրսեցիներին մաղթեց լավ սովորել, դառնալ լավ մասնագետ, լավ ուսուցիչ և արժանի քաղաքացի: Ժամանակակից աշխարհը նոր պահանջներ է ներկայացնում, պետք է պատրաստել մրցունակ և որակյալ մասնագետներ: Մանկավարժական համալսարանն ամեն ինչ արել և անում է, ուսանողներին մնում է միայն օգտվել տրված հնարավորությունից:

Պրոռեկտորը վստահեցրեց, որ շարունակվելու են համալսարանի գործընկեր բուհերի հետ համագործակցությունն ու փոխանակային ծրագրերը, ստեղծվելու են նոր ծրագրեր, և ինչպես նախկինում, ամեն ինչ արվելու է հօգուտ ուսանողի:

Ավանդույթներով հարուստ

Մանկավարժական համալսարանը հետաքրքիր պատմություն ունի, նույնքան էլ հետաքրքիր ֆակուլտետներ, որոնցից մեկն է Բանասիրականը՝ մայրենիի ավանդման ու պահպանման լավագույն դարբնոցը: Այստեղ ընդունվածների թիվը խորհրդանշական էր՝ 33 աղջիկ: Նորեկներին շնորհավորեցին դեկան Աշոտ Գալստյանը, փոխդեկան Նարիա Խաչատրյանը, ամբիոնների վարիչներ Աելիտա Դոլուխանյանը և Սուրեն Դանիելյանը:

Դեկանը կարևորեց ուսուցչի մասնագիտությունը՝ ընդգծելով, որ դպրության լույսը դարեր շարունակ ակնածանքի ու սիրո մարմնացումն է եղել, ուսուցիչն էլ՝ պաշտամունքի առարկա:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Դոլուխանյանը վստահեցրեց, որ բուհի առաջընթացն ու ձեռքբերումները միտված են աշխարհի լավագույն համալսարանների հետ համաքայլ գնալուն, պրոֆեսոր Ս. Դանիելյանը մաղթեց, որ ուսումնառության տարիները վերելքի անընդմեջ ու անսայթաք ճանապարհ լինեն ուսանողների համար:

«Այս աշխարհը ձեզ համար նոր է՝ ինքնաճանաչման բոլոր դրսևորումներով, եկեք միասին ներս մտնենք ու կարևորենք մեր ժամանակը»,- ասաց Ն. Խաչատրյանը:

ֆակուլտետի առաջին կուրսեցիների հետ հանդիպումն ամեն տարի կազմակերպվում է համալսարանի գիտական գրադարանի հումանիտար ընթերցասրահում: Սա ևս խորհուրդ ունի՝ մոտ լինել գրքերին, որոնց հետ պետք է անցնեն ուսումնառության տարիները: Գրքերի զորավոր լույսից էլ կենսական լիցքեր ստանալու հորդորով էին ամփոփվում բոլոր ելույթները: Փոխդեկան Լուսինե Պողոսյանը, Արմինե Դալլաքյանը, ամբիոնների վարիչներ Զուլիետա Գյուլամիրյանը, Վլադիմիր Կարապետյանը, ինչպես նաև դասախոսներ Սվետլանա Մարությանը, Քնարիկ Հովհաննիսյանը, Քնարիկ Ասմարյանը, գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը շնորհավորեցին նորեկներին՝ մաղթելով գիտելիքների ամբարման արդյունավետ տարիներ և երազանքների իրականացում: Դասախոսները հիշեցին իրենց ուսանողական տարիների՝ դասախոսական աշխատանքի անցնելու ձգտումն ու երազանքները, որոնք իրականություն են դարձել: Վստահեցրին, որ բոլոր դժվարությունների պահին կլինեն ուսանողի կողքին որպես ավագ ընկեր ու բարեկամ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ուսանող Կառլոս Նազարյանը և տարվա լավագույն ուսանողուհի Զվարթ Ամբրոյանը շնորհավորեցին կրտսեր ընկերներին ու հորդորեցին լավ սովորել, քանզի գիտելիքն արժեք է՝ այն պետք է ձեռք բերել, կրել, պահպանել ու փոխանցել սերունդներին:

Սկզբնական կրթության

Օրը տոնական ու ծանաչողական հանդիպումներով շարունակվեց բոլոր ֆակուլտետներում՝ դառնալով ուսումնական տարվա մի նոր սկիզբ, որից ձգվելու են դեպի գիտելիք տանող ծանապարհները: Բարի՜ գալուստ և բարի՜ երթ, սիրելի՛ առաջին կուրսեցիներ:

«ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԿՈՉՈՒՄ Է»

➢1 յունքում որոշ համայնքերում կրթության որակի բարձրացման նկատառումներով փոխվել են դասավանդման սկզբունքներն ու մեթոդները:

Տեսանելի արդյունքների կողքին ԿԳ նախարարն ընդգծեց նաև անելիքները՝ վերապատրաստումները պետք է լինեն առավել հասցեական և արտացոլեն Սփյուռքի ուսուցիչների մասնագիտական պահանջները, զբաղվեն դասագրքաստեղծ գործունեությամբ. դրանում մեծ է հատկապես Մանկավարժական համալսարանի դերը:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ևս շնորհավորեց սփյուռքահայ ուսուցիչներին՝ ասելով, որ վերապատրաստումների այս փուլն առանձնահատուկ էր նրանով, որ համընկավ երկրում իրականացվող որակական փոփոխություններին, ինչը մեծ ոգևորություն է առաջացրել նաև Սփյուռքում:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին ազգանվեր գործունեության համար, համոզված, որ ծրագրի ընթացքում ստացած հաճելի տպավորություններն ու ջերմ հիշողությունները նրանք կփոխանցեն նաև երկրի հոգսերով մտահոգ սփյուռքահայ մանուկներին:

«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը կարևորեց ՀՀ կրթության և գիտության նախարարության դերն ու աջակցությունը վերապատրաստումներում, ինչին կարևոր մասնակցություն ունի նաև Մանկավարժական համալսարանը:

Ս. Դանիելյանը լիահույս է, որ սփյուռքահայ ուսուցիչները հայրենիքից կվերադառնան վերապատրաստված ու առավել բարձր տրամադրությամբ՝ տանելով իրենց հետ նորոգված հայրենիքից ջերմ հիշողություններ:

ԱՄՆ-ից ուսուցիչ Գևորգ Պետիկյանը 16 երկրներից մեկտեղված կրթության մշակների անունից շնորհակալություն հայտնեց ծրագրի հաջող կազմակերպման համար. «Ուսուցիչը երախտապարտ կոչում է: Իբրև Մաշտոցի բանակը համալրող կամավոր զինվորներ՝ խիստ անհանգստացած ենք, թե ովքեր են մեզ փոխարինելու 10-20 տարի հետո, ովքեր են փոխանցելու հայ մտքի ու լույսի ճառագայթները: Հայ ուսուցչի ուսերին է դրված ազգային իմաստ հաղորդելու դժվարին գործը»:

Գևորգ Պետիկյանը բոլորի անունից վստահեցրեց, որ այս օրերին կարողացել են մեկտեղել կրթության ոլորտի իրենց հոգսերը, անհանգստությունը և չեն հուսահատվել՝ շնորհիվ ուսուցչի վեհ կոչման հմայքի:

Համալսարանի դպրոցում

Սեպտեմբերի 1-ը Հայաստանում նշվում է որպես Գիտելիքի և դպրության օր. ՀՀ ուսումնական հաստատություններում մեկնարկեց նոր ուսումնական տարին:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս այդ օրը մեծ շուքով նշվեց ՀՊՄՀ-ի N57 դպրոցում: Նոր ուսումնական տարին ազդարարող առաջին զանգը հիշարժան դարձավ բոլորի՝ և? ուսուցիչների, և՛ աշակերտների համար: Ծաղիկները, փուչիկները, ուրախ տրամադրությունը նոր ուսումնական տարվան ընդառաջ դպրոցում ապահովված էր: Դպրոցն այս տարի իր հարկի տակ ընդունեց 70 աշակերտ՝ 2 դասարանով:

Աշակերտներին ջերմ ողջույնի խոսքով դիմավորեց դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը: Շնորհավորելով գիտելիքի օրվա առթիվ՝ տնօրենը նշեց, որ կրթությունը բոլոր ժամանակներում էլ եղել է ամենաառաջնայինը:

«Բոլոր ժամանակներում կրթությունն է եղել հայ ժողովրդի ապավենը: Մեր պատմության տարբեր ժամանակաշրջաններում կրթական հաստատությունները միշտ գործել և համախմբել են հայ ժողովրդին:

Շնորհավորում եմ բոլորին այս գեղեցիկ օրվա առթիվ, շնորհակալ ենք ձեր երեխաների դաստիարակման և կրթման գործընթացը մեզ վստահելու համար և ուրախ ենք ձեզ ընդունել մեր մեծ ընտանիք»,-ասաց Նաիրա Տողանյանը:

Առաջին դասարանցիներին շնորհավորեց և իրենց այբբենարանները նվիրեց ԿԱԻ ներկայացուցիչ, պատմաբան Առաքել Գյուլբուդաղյանը: Գիտելիքի և դպրության օրվա առթիվ նա բոլորին մաղթեց հույսերով լի ուսումնական տարի:

Առաջին դասարանցիներին շնորհավորեց նաև ՌԴ-ում Հայաստանի դեսպանատանը գործող Մոսկվայի «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանը:

Դպրոցում տիրող սեպտեմբերյան ուրախ մթնոլորտը անպայման կուղեկցի աշակերտներին ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԲՈԼՈՐ ՋԱՆՔԵՐՆ ՈՒՂՂՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՆՊԱՏԱԿԻ

ՀՊՄՀ-ի ավագ դպրոց-վարժարանն այս տարի իր դռները բացեց 137 աշակերտի առաջ: Հենց մուտքի մոտ աշակերտներին ջերմ ու բարի մաղթանքներով դիմավորեցին ավագ ընկերները:

Վարժարանն այս տարի ունի 5՝ ֆիզիկամաթեմատիկական, լրագրության, անգլերենի, հոգեբանության և նկարչության ենթահոսք:

Վարժարանի աշակերտական խորհուրդը բոլոր հոսքերում հանդես եկավ հետաքրքիր միջոցառումներով:

Վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը նոր վարժարանականներին մաղթեց հաջող, արդյունավետ, բովանդակալից ուսումնական տարի: Տնօրենն ուրախությամբ փաստեց, որ այս տարի անցյալ տարիների համեմատությամբ վարժարան դիմել են ավելի մեծ թվով աշակերտներ:

Տնօրենը նկատեց, որ նոր սերունդը դարձել է ավելի պահանջատեր, ակտիվ, ինքնուրույն, և վարժարանն իր աշխատանքային անձնակազմով պատրաստ է հաշվի նստել նրա հետ:

Նոր ուսումնական տարվա մեկնարկով էլ կրթության ոլորտի բոլոր պատասխանատուների ու մանկավարժների համար սկսվեց աշխատանքային մի նոր շրջան, որի ընթացքում բոլորի ջանքերն ուղղվելու են մեկ գերագույն նպատակի՝ կրթել և դաստիարակել գիտելիքներով հարուստ արժանապատիվ սերունդ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

«Ամառային դպրոց-2018»...

➢1 «Հուսով եմ և վստահ, որ դուք սիրեցիք Հայաստանը և անպայման ցանկություն կունենաք կրկին վերադառնալ մեր երկիր՝ Հայաստան»,- ամփոփեց Ռուբեն Միրզախանյանը և ծրագրի մասնակիցներին հանձնեց հավաստագրեր, որոնք նաև երեք կրեդիտ են յուրաքանչյուրի ուսման գնահատման գործընթացում:

«Կրթություն, ժառանգություն և հնարավորություններ» խորագիրը կրող այս տարվա ամառային դպրոցը հագեցած էր հատկապես ինտերակտիվ դասախոսություններով և այցելություններով Հայաստանի պատմամշակութային վայրեր:

ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Մարիաննա Հարությունյանը նկատում է՝ այս տարվա ծրագիրը հարուստ էր ինչպես մշակութային, այնպես էլ կրթական բաղադրիչներով: Դասախոսությունների թեմաները հատուկ էին ընտրված, ինչն էլ նպաստել է անձի, անհատի, ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը:

«Այս ծրագիրը ոչ միայն մշակութային արժեքների փոխանակում է, այլև մասնակիցներին տալիս է բազմաթիվ հմտություններ, նոր գիտելիքներ և մշակութային նոր բացահայտումներ. մասնակիցները սովորում են, համեմատում ու բացահայտում նոր արժեքներ, այն ուսանողների մտահորիզոնի զարգացման լավագույն միջոցներից է»,- ասաց Մ. Հարությունյանը:

Փակման հանդիսավոր արարողությանը ուսանողները ներկայացրին իրենց ազգային երգն ու պարը, բեմադրություն, հումոր, իսկ վերջում ժամանցային և մշակութային գերհագեցած առօրյան ու տպավորությունները յուրաքանչյուր խումբ ամփոփեց տեսաշարով: Օտարազգի ուսանողները շատ տպավորված էին Հայաստանով և ծրագրով: Հենց օդանավակայանից հասցրել էին սիրել Հայաստանը, իսկ հետո սիրահարվել հայկական բնաշխարհին և մշակույթին:

Լիտվայի կրթական գիտությունների համալսարանի ներկայացուցիչ Անդրիեկուտե Աստան շատ ուրախ է, որ հենց իրեն է նման հնավորություն ընձեռվել՝ ծանոթանալ հայկական կրթական մոդելին, ստանալ նոր գիտելիքներ, ունենալ նոր ընկերներ. «Այստեղ ձեռք բերեցի շատ հմտություններ, որոնք ինձ հետագայում անհրաժեշտ են լինելու: Շատ սիրեցի Հայաստանը, հաստատ կվերադառնամ այս երկիր»:

Չինաստանի Հարավ-արևմտյան համալսարանի մասնակից Յու Յալլան հատկապես տպավորված էր դասախոսություններից՝ «Ձեր մասնագետները իրականում շատ լավն են ու բանիմաց: Շատ ուրախ եմ, որ կարողացա մասնակցել այս հիանալի ծրագրին: Դեռ Հայաստանից չհեռացած՝ արդեն կարոտում եմ: Հատկապես տպավորիչ էին հայկական եկեղեցիներն ու ճարտարապետությունը»,- ասաց Յու Յալլան և հավելեց, որ ամենից շատ կկարոտի ընկերներին:

Ծրագրի ընթացքում կազմակերպվել են այցեր պատմամշակութային վայրեր, մասնակիցները ծանոթացել են հայոց պատմությանն ու արժեքներին, հայ երիտասարդների կյանքին, հայկական կրթական մոդելին, ունեցել հանդիպումներ, քննարկումներ, դասախոսություններ և ժամանցային խաղեր:

Ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին Մանկավարժական համալսարանին՝ արդյունավետ, տպավորիչ և անմոռանալի ծրագիր կազմակերպելու համար, խոստացան անպայման վերադառնալ արևոտ և հյուրընկալ Հայաստան:

Նշենք, որ Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում անցկացվող տասնօրյա «Ամառային դպրոց 2018» միջազգային ծրագրի մասնակիցները ներկայացնում էին Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ, Լիտվայի կրթական գիտությունների, Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական, պետական մանկավարժական, Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի, Սանկտ Պետերբուրգի տնտեսագիտական, Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական, Չինաստանի Հարավ-արևմտյան, Ֆինլանդիայի Օուլուի, Արցախի պետական և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանները:

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ՄՆԱՍ ԲԱՐՈՎ ԼԻՏՎԱ՝ ԱՐԵՎՈՏ ԳՈՒՅՆԵՐԻ ՈՒ ՋԵՐՄ ԺՊԻՏՆԵՐԻ ԵՐԿԻՐ

Հենց օդանավակայանում Վիլնյուսը մեզ՝ համալսարանի «Ամառային դպրոց»-ի ծրագրով Լիտվա մեկնած տարբեր ֆակուլտետների 10 ուսանողներիս դիմավորեց հյուրընկալության բարձր մակարդակով՝ ամառային փարթամ կանաչի տարբեր գունախաղերով ու ջերմ ժպիտներով:

«Կրթական գիտությունների համալսարան» տանող ճանապարհն անցնում էր մեզ համար զարմանալիորեն մաքուր փողոցներով և սաղարթախիտ մայրուղիներով:

Ընդամենը 10 օրվա ընթացքում մենք եղանք Լիտվայի տարբեր քաղաքներում, մշակութային կենտրոններում, լսեցինք հետաքրքիր դասախոսություններ, ծանոթացանք տարբեր երկրներից եկած ուսանողների հետ, նրանց հետ կազմակերպեցինք մի շարք միջոցառումներ, պատմեցինք մեր երկրի մասին:

Անմոռանալի էին էքսկուրսիաները Վիլնյուսի «Հին քաղաքի» հատվածում, այցելությունները Կերնովե, Տրակայ քաղաքներ, որոնք հմայիչ էին ոչ միայն իրենց մաքրությամբ ու արևային գույներով, այլ ավելի շուտ՝ պատմական հուշարձաններով, հնի և նորի ճարտարապետական օրինակելի համադրություններով, դրանց ներդաշնակությամբ:

Քայլում ես քաղաքների նեղլիկ, սալահատակված փողոցներով ու զգում ես միջնադարի շունչը, լսում ես զրահապատ ասպետների ձայնը, տանիքներին թառած պղնձածույլ աքաղաղների «բարի լույսի» մաղթանքը:

Նեղլիկ փողոցները քեզ դուրս են բերում նորակառույցներով երիզված փողոցներ, ուր իրենց իրիկնային հանգիստն են վայելում ժպտադեմ տեղացիները, օտարերկրյա հյուրերը: Դու մերթ պատմական անցյալում ես, մերթ 21-ր դարում, շարժվում ես ժամանակի անցյալ, ներկա շարժընթացով, իսկ կիսակառույց շենքերը հայացքդ ուղղում են դեպի ապագա:

Ամեն ինչ հեքիաթային էր, զարմանալի, իսկ ամենազարմանալին այն էր, որ շաբաթ և կիրակի օրերին կարող էիր...անվճար երթևեկել տաքսիներով, ինչից մենք մեծ հաճույքով օգտվում էինք:

Ընդամենը 10 օր, բայց անմոռանալի հիշողություններ, իմացության շրջանակների ընդլայնում, տասնյակ նոր բարեկամներ՝ ռուսներ, ուկրաինացիներ,

վրացիներ... ու երախտագիտության անթաքույց զգացում համալսարանի ղեկավարության հանդեպ՝ «Ամառային դպրոց» ծրագրի մտահղացման ու իրականացման համար:

Լիլիթ ՄԿՐՏՉՅԱՆ
Օտար լեզուների ֆակուլտետի անգլիական բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

ՆՇՎԵՑ ՇՈՒՇԻԻ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 190-ԱՄՅԱԿԸ

Այս տարի լրացավ Շուշիի գրատպության 190-ամյակը (1828-2018): Պատմամշակութային այս կարևոր իրադարձությունը նշելու նպատակով հուլիսի 12-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում՝ Ժուռնալիստների միության դահլիճում տեղի ունեցավ Արցախի Ժուռնալիստների միության և Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի համատեղ միջոցառումը՝ նվիրված այդ հիշարժան հոբելյանին: Կլոր սեղանին մասնակցում էին գիտության, կրթության, մշակույթի և լրատվական ոլորտի ներկայացուցիչներ:



Բացման խոսքով հանդես եկավ Արցախի ժուռնալիստների միության նախագահ, գրող, լրագրող Կիմ Գաբրիելյանը՝ կարևորելով ու նորովի գնահատելով Շուշիի դերը տպագիր մշակույթի անցյալի, ներկայի և ապագայի զարգացումներում:

Այնուհետև զեկուցումներով հանդես եկան Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Գագիկ Սուքիասյանը և «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Միեր Հարությունյանը:

«Անգնահատելի մեծ է մոտ երկու դար առաջ Շուշիում հիմք դրված գրատպական կենտրոնի դերը հայ գրքի ու պարբերական մամուլի հրատարակման գործում: Ինձ համար անչափ ուրախալի է ոչ միայն խոսել ու վերահիմաստավորել հայ հասարակական-կրթական կյանքում և առհասարակ Անդրկովկասի պատմության ու մշակույթի զարգացման մեջ Շուշիի առանձնահատուկ տեղի ու դերի մասին, այլ չափազանց կարևոր է նաև առաջարկել Շուշիում ռազմավարական ու մշակութաբանական նշանակություն ունեցող գրատպական գործի վերասկզբնավորումը»,- նշեց Գ. Սուքիասյանը:

Ներկայացնելով Շուշիում գրատպության զարգացման ուղին և բերելով տպագրված գրքերի ու պարբերական մամուլի վերաբերյալ տվյալներ, Մ. Հարությունյանը նշեց. «Ներկայումս աշխարհաքաղաքական զարգացումների շրջանակներում նման հոբելյանական տարեթվին պետք է ուշադրության արժանացնել, մեկ անգամ ևս փաստել, որ հայը մշակութաստեղծ ժողովուրդ է: Մշակույթի մեջ գրատպությունն ունի ուրույն տեղ, և այն ժողովրդի մտավոր արտահայտություններից մեկն է, անցյալի ժառանգության փոխանցման լավագույն միջոցը: Վերասկզբնավորելով տպագրական գործը Շուշիում՝ հիմնելով թեկուզ մի փոքրիկ տպարան, այն իր դերակատարությունը կունենա քաղաքակրթությունների ներկա հակամարտության մեջ»:

Այնուհետև ելույթ ունեցավ Արցախի Ազգային Ժողովի փոխնախագահ, պատմական գիտությունների դոկտոր Վահրամ Բալայանը: Բանախոսն ասաց, որ «Արցախը կարող է մշակույթով ճանաչելի դառնալ աշխարհին, ինչպես որ Գյումրին և Շուշին իրենց յուրահատուկ տեղն ունեն հայ քաղաքակրթական մտքի պատմության մեջ: XIX դարում Շուշիի մշակութային զարգացումը կապված է եղել տնտեսական վերելքի հետ: Այստեղ է կուտակվել հայկական կապիտալը և վերածվել ազգային արժեքների: Քաղաքում այն ժամանակ ստեղծվում էր քաղաքացիական հասարակություն. շուշեցու համար օպերան անծանոթ չէր, և հայ մտավորականը նույնիսկ փորձում էր միջնադարյան վարքուբարքով ապրող թրքությանը ներքաշել մշակութային կյանքի մեջ: Ստեղծվում էր բազմազգ մի քաղաք, որի հիմքը հայկական մշակույթն էր: Մեր ժամանակներում անչափ կարևոր է Շուշին աշխարհին ներկայացնելը»:

Պատմաբան, մշակույթի վաստակավոր գործիչ Սլավա Սարգսյանն էլ իր ելույթում հատուկ ուշադրություն հրավիրեց Շուշիում կատարված հնագիտական պեղումների վրա և ավելացրեց, որ «այստեղ մարդիկ բնակվել են դեռ քարե դարից, և որ այդ բնակավայրը եղել է սրբատեղի: Շուշին իր մշակույթով եղել է հզոր քաղաք, որտեղ տպագրվել են գրքեր, թերթեր և այստեղ կարելի է նորից գրահրատարակչություն ստեղծել»:

Ելույթ ունեցան նաև՝ լրագրող, հրապարակախոս Միքայել Հաջյանն ու «Կաճառ» գիտական կենտրոնի ավագ գիտաշխատող Յուլյա Հարությունյանը: Նրանք տարբեր տեսանկյուններից անդրադարձան և վերստին գնահատեցին Շուշիի մշակութային անցյալն ու ներկան, միևնույն ժամանակ շեշտեցին մշակութային ժառանգության պահպանման, ինչպես նաև Շուշիում գրատպական գործի զարգացման ու տպագրիչ-մասնագետների վերաբերյալ հարցերի կարևորությունը:

Գագիկ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ստեփանակերտ-Երևան

Լույս է տեսել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյանի «Գրաբարի ձեռնարկ» գիրքը:

Այսօր մեր լայն ընթերցող հասարակությունը կարող է օգտվել հրապարակի վրա եղող սույն ձեռնարկից, որը ներառում է գրաբարի հնչյունաբանությունը, քերականությունն ամբողջական տեսքով (ձևաբանություն, շարահյուսություն), նաև բառարան: Հարկ է նշել, որ գրքի ստեղծումը պայմանավորված է ժամանակի հրամայականով, քանզի վերջին տարիներին մեծացել է հետաքրքրությունը գրաբարի նկատմամբ: Ձեռնարկը միտված է նպաստելու բանասիրական և հումանիտար այլ ֆակուլտետների ուսանողների՝ գրաբարից ունեցած տեսական և գործնական գիտելիքների յուրացման դժվարին խնդրի լուծմանը: Նյութի ավանդումը պայմանավորված է ձեռնարկի կառուցվածքով: Նախ ըստ հարկի ներկայացվում է տեսական մասը, ապա՝ ընթերցանության նյութերը, որոնք քաղված են հայ հին մատենագիրների ինքնուրույն երկերից (Ագաթանգեղոս, Եղիշե, Բուզանդ, Խորենացի, Դ. Անհաղթ և այլք), ինչպես նաև օրինակելի թարգմանություններից: Հեղինակը մասնավորաբար կարևորել է կիրառական և ճանաչողական վարժություններն ու առաջադրանքները, որոնք խարսխվում են ընթերցանության նյութերի վրա: Ձեռնարկն ունի գիտամեթոդական ուղղվածություն, հետևաբար վարժությունների համակարգն ավանդվում է դիդակտիկայի՝ պարզից դեպի բարդը, հեշտից դեպի դժվարը սկզբունքներով, որոնք և հնարավորություն կտան ուսանողներին փաստերը համադրելու, հակադրելու, վերլուծելու և վերացարկելու:

Ուշարժան են յուրաքանչյուր թեմայի վերջում զետեղված ամփոփիչ հարցադրումները, որոնք հետապնդում են ավանդվող նյութի յուրացումն ստուգելու և ամրակայելու նպատակ:

Առաջին բաժինը բովանդակում է գրաբարի հնչյունաբանությունը, որում պատշաճորեն ներկայացվում են գրաբարի հնչյունաբանական բոլոր իրողությունները՝ հնչյունական կազմը, հնչյունափոխության տեսակները, ուղղախոսությունը և ուղղագրությունը, տառադարձությունը: Բոլոր գիտակարգերի ուսուցման ընթացքում շոշափելի է դիդակտիկայի՝ մատչելիության և գիտակցականության սկզբունքների առկայությունը:

Տեսական նյութի ավանդմանը զուգընթաց տրվում են նաև ծանոթություններ, որոնք արժեքավոր են ճանաչողական տեսանկյունից և ավելի են մեծացնում ձեռնարկի գործնական նշանակությունը:

Երկրորդ բաժնում փաստական հարուստ նյութի հիման վրա դիտարկվում են գրաբարի խոսքի մասերն իրենց բնորոշ քերականական կարգերով: Մասնավորաբար կարևորվում են գրաբարի հոլովման և խոնարհման համակարգերի խոր ու համակողմանի վերլուծությունները: Հեղինակը ներկայացնում է նաև կանոնական ձևերից շեղումները, զուգաձևությունները:

Երրորդ բաժնում ավանդվում են գրաբարի շարահյուսության առավել կարևոր գիտակարգերը: Նկատենք, որ գրաբարի որոշ ձեռնարկներում շարահյուսությունը դուրս է մնում, կամ կատարվում են որոշ անդրադարձումներ: Այս ձեռնարկն ամբողջացնում է գրաբարի շարահյուսության ուսումնասիրությունը:

Նախ կատարվում է պարզ նախադասության ընդարձակ և համակողմանի քննություն: Դիտարկվում են ենթական և ստորոգյալը, նրանց արտահայտությունը, անվան լրացումները, բայական անդամի լրացումները, նրանց արտահայտությունը: Արժեքավոր է բարդ նախադասության ավանդումը: Համակողմանիորեն քննված են համադասական, ստորադասական, բազմաբարդ նախադասությունները:

Ձեռնարկը ներառում է նաև արժեքավոր բառարան, որն ավելի դյուրին կդարձնի ընթերցանության նյութերի ընկալումը և մեկնաբանումը:

Պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի սույն «Գրաբարի ձեռնարկ» ուսումնական գիրքն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական ուղղվածություն, ճանաչողական, դաստիարակչական լուրջ նշանակություն և կարող է օգտակար լինել գրաբարով զբաղվողներին:

Գայանե ԽԱԼԱԹՅԱՆ
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Բեղմնավոր աշխատանքի արդյունքը



Լույս է տեսել հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի «Ֆրանսիացի հայագետներ (19-20-րդ դարեր)» մեծածավալ մենագրությունը, ուր ներկայացված է 19-20-րդ դարերի ֆրանսիացի նշանավոր հայագետների հայագիտական ժառանգությունը: Մենագրության մեջ տեղ են գտել նաև մեր օրերի մեծագույն հայագետ Ժան-Պիեռ Մահեին նվիրված երկու հոդվածներ՝ համառոտ կենսագրական ակնարկով:

Գիրքը պրոֆեսոր Դոլուխանյանի երկար տարիների բեղմնավոր աշխատանքի ու տքնանքի արդյունքն է: Ըստ հեղինակի՝ հայ և արտասահմանյան գրականության մեջ նման բովանդակային խորությամբ անդրադարձ դեռևս չի եղել:

Հեղինակը փաստում է, որ աշխատության մեջ ընդգրկել է ֆրանսիացի հայագետներից ամենանշանավորներին, որոնք հայ գրականությունն աշխարհին ներկայացնելու գործում մեծ ներդրում են ունեցել: «Նրանք հայ գրականությունը, պատմությունն ու մշակույթը կապում են համաշխարհայինին և ցույց տալիս մեր դերը բոլոր ժամանակներում,-ասում է Աելիտա Դոլուխանյանը:- Հաճախ հայերն ընկնում են ավելորդ չափազանցության մեջ՝ չիմանալով հայերի իրական դերը համաշխարհային պատմության մեջ, այնինչ օտարն առավել օբյեկտիվ և համաշխարհային պատմության, մշակույթի համատեքստում է վերլուծում, ուսումնասիրում և բացահայտում հայ ժողովրդի դերը»:

Մենագրությունը անցյալի եվրոպացի հայագետների գիտական ժառանգությունը Հայաստանի գիտնականներին և հանրությանը հասանելի դարձնելու մեծ դեր ու նշանակություն ունի և ժամանակի մեջ առավել քան արդիական է:

«Գիրքը մեծագույն տուրք է հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հանդեպ ֆրանսիացի հայագետների նվիրումին»,-հավելում է ակադեմիկոս Ա. Դոլուխանյանը և ընդգծում աշխատության առանձնահատուկ նշանակությունն իր գիտական կենսագրության մեջ:

«Ֆրանսիացի հայագետներ (19-20-րդ դարեր)» մենագրությունը տպագրվել է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ Համահայկական հիմնադրամի օժանդակությամբ Ֆրանկոֆոնիայի 17-րդ միջազգային գագաթաժողովի շրջանակներում և նախատեսված է հայագետների, հայ ժողովրդի պատմությունն ու գրականություն ուսումնասիրողների, ընթերցող լայն հանրության համար:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը Պաշտպանության բանակի զինծառայողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ներդրած նշանակալի ավանդի համար «Երախտագիտություն» մեդալով պարգևատրել է Մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոսներ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հակոբ Վանիկի Թադևոսյանին և ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի կողմից կազմակերպված «Պատմության և մշակույթի էջեր» ծրագրի մասնակից, մանկավարժական գիտությունների թեկնածու Վոլոդյա Արսենի Գասպարյանին:

Շնորհավորում ենք և մաղթում նոր հաջողություններ պաշտպանության բանակին միտված ծրագրերին համագործակցելու գործընթացներում:

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Թաթարստանի մայրաքաղաք Կազանում սեպտեմբերի 4-ից 8-ը անցկացվեց միջազգային գիտական մեծ ֆորում, որը նվիրված էր մշակույթների միջազգային փոխազդեցությանն ու երկխոսությանը, ինչպես նաև հոգևոր մշակութային արժեքների հանդեպ հանդուրժողականությանը: 50 երկրների 200 ներկայացուցիչ էր մասնակցում գիտական ֆորումին, և միջմշակութային փոխհարաբերությունների ու երկխոսության այդ եզակի հարթակում հինգ օր շարունակ գիտական հետաքրքիր զեկուցումներ ընթերցվեցին, եղան արդյունավետ քննարկումներ:

Հայաստանից ֆորումին մասնակցեցին Մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը, Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության բաժնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Լիանա Գևորգյանը, ԵՊՀ-ի թուրքագիտության ամբիոնի վարիչ Ալեքսանդր Սաֆարյանը, ՀՀ արտգործնախարարության ներկայացուցիչ Անահիտ Կարապետյանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ Թաթարստանում իր նախադեպը չունեցող ֆորումում Թաթարստանը փորձում էր կազմակերպության հովանավորությանն ի պահ տալ իր պատմամշակութային ժառանգությունը: Դրան ուղղված քայլերից մեկը բլրի մեջ՝ 17-րդ դարի պատմության պահպանված մի հատվածում փայտի հնագիտական թանգարանի բացումն էր Սվյաժեսկ քաղաքում:

Պլենար նիստում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը օտարազգի հյուրերին ներկայացրեց «Մեծամորի հնագիտական հուշարձանը» զեկուցումը, Լիանա Գևորգյանն էլ նիստերի ընթացքում հանդես եկավ Մեծամորի արգելոց-թանգարանի հեռանկարների մասին դասախոսությամբ:

Մեր պատմամշակութային հնագիտական արժեքների հանդեպ հատկապես մեծ հետաքրքրություն հանդես բերին Մոլդովան,Ղրղզստանը և Թաթարստանը, եղան նաև համատեղ աշխատանքի առաջարկներ:

Ֆորումի անցկացումը միտված էր նաև Մետաքսի ճանապարհի/Վոլգյան/ երկրների հետ մշակութային կապերի ստեղծմանն ու զարգացմանը:

«Բոլգար քաղաքում պատմամշակութային կենտրոն-արգելոց թանգարան կա, որտեղ մենք փորձեցինք ներկայացնել մեր աշխատանքները և առաջարկեցինք գիտական առումով համատեղ մշակել մեր 3,5 հազարամյա հնության փայտե իրերը, որոնք պեղվել են Մեծամորի, Լճաշենի, Լոռի բերդի տարածքներում,- ասաց պրոֆեսոր Ա. Փիլիպոսյանը:-Հայաստանն այս տեսանկյունից մշտապես պատվավոր տեղ է ունենում նման գիտական հարթակներում, որովհետև Հայաստանը մասնակից երկրներից ամենափոքրն է, որտեղ, սակայն, ամենախիտ տեղաբաշխված պատմամշակութային ժառանգության անշարժ հուշարձաններ կան: Դրանց թիվը 25 հազար է, իսկ, օրինակ, հարևան Մոլդովայում այդ թիվը չի գերազանցում 6 հազարը»:

Պրոֆեսորը փաստեց, որ Թաթարստանում հնագիտական մեծ արշավախմբեր են աշխատում, մեր երկիրն էլ հնագիտական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում և ասելիք ունի, ահա ինչու երրորդ տարին անընդմեջ հրավիրվում է մասնակցելու նմանօրիկ ֆորումի:

Հպարտությամբ պետք է արձանագրել, որ Մեծամորի արգելոց-թանգարանում և Հայաստանի պատմության թանգարանում ներկայացված են 3,5 հազարամյակի պատմության թվագրմամբ հին փայտե իրեր՝ սայլեր, գահավորակի, պատգարակի մասեր, ինչը մեծացնում է տարբեր երկրների հնագետների հետաքրքրությունը մեր զարմանահրաշ երկրի հնագույն պատմության ու մշակույթի հանդեպ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Այցելություն Ավերյալ Երկիր

Խմբի ճանապարհորդները, անհամբերությամբ տեղավորվելով միկրոավտոբուսում, արագորեն ծանոթանում և մտերմանում էին: Խմբին ուղեկցողը հազիվ էր հասցնում պատասխանել միաժամանակյա հարցերի տարափին: Բոլորն ուզում էին հասկանալ ճանապարհային քարտեզի առաջին քայլերը, արագ հասնել էրգիր...

Անցնում էինք Արագածոտնի, Շիրակի մարզերի հայոց արևից խանձված խոտածածկույթ հողի և ամրապինդ ծառերի կողքով. ծանոթ բնապատկերները տիպիկ ամառային, հայկական ու հարազատ էին:

Հաղթահարելով հայ-վրացական- թուրքական մաքսակետերը, խաղաղվեցինք և, պատրաստ պահած նկարահանող սարքերը, մեկ աջ, մեկ ձախ էինք նայում, լսելով հայոց պատմական վայրերի նախկին և նոր տեղանունների բացատրությունները: Շատերը չէին լսում. մտքերի հետ էին, լոկ դիտում էին և ուզում էին կլանել, զգալ, մտքում դրոշմել տեսածը:

Տխուր ու լուռ էինք...

Անցնում էինք Արդահան նահանգով, որը ծովի մակերևույթից բարձր է 2000 մետր, Չլդրան լճակի ափով, որին վանեցիները կոչում էին հյուսիսային ծովակ: Տեղավայրն իր աշխահագրական դիրքով նման էր Սյունիքի ալպիական գոտուն: Մեզ ուղեկցում էին նոճուտի անտառները, բազմագույն ու բազմազան ծաղիկները: Ճարտարապետական ոճական կառույցներ չկային, հանդիպած կառույցները միանման ցածրահարկ, չգազաֆիկացված բնակելի շենքեր էին, որտեղ ապրում էին վերաբնակեցված քրդերն ու թուրքերը: Տեսանելի էին շենքերի տանիքներին կոկիկ տեղադրված արևային էներգիա կլանող սարքերը: Ժամեր շարունակ ընթանում էինք հայելանման, հարմարավետ ճանապարհներով, որոնք ապահովված էին կատարյալ խնամված ենթակառուցվածքներով: Ակնհայտ էր, որ բարվոք ճանապարհներ ունենալը պետության գլխավոր ռազմավարություններից մեկն էր: Լավ ճանապարհները զարգացած տնտեսություն ունենալու գրավականն է:

(Շարունակելի)

Գայանե ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՈԳՈՒՅ ԵՎ ՆԵՐԱՇԽԱՐՀԻՑ ՀՈՐԴՈՂ ԷՆԵՐԳԻԱՆ

Մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ գիտատեխնոլոգիական Ակադեմիայի ակադեմիկոս Ֆաենբերգ Սարգսյանի 70-ամյակը նշանավորվեց Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում բացված անհատական ցուցահանդեսով: Նախաձեռնությունը համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանինն էր:

«Ֆաենբերգ Սարգսյանը տաղանդավոր ու ճանաչված նկարիչ է, ով այսօր մեզ է ներկայացել իր գեղեցիկ արվեստով»,-ասաց ՀՀ նկարիչների միության նախագահ, ՀՊՄՀ կերպարվեստի ամբիոնի վարիչ Կարեն Աղամյանը: Նա ներկաների համար փորձեց գաղտնազերծել Ֆ. Սարգսյանի արվեստը. «Քո արվեստը քո էությունն է, քո ներքին եռանդի արտահայտությունը: Դու ունես Աստծուց ստացած մի ներքին կրակ, որն արտացոլվում է ստեղծագործություններիդ մեջ»:

«Ճշմարիտ արվեստագետի կարևորագույն խնդիրներից մեկը մարդու և բնության ընկալման սեփական մոտեցումն է»,-ասաց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը: Բնութագրելով իր ավագ գործընկերոջ արվեստը՝ Ա. Հակոբյանը նրան համարեց արդի հայ գեղանկարչության ինքնատիպ նկարիչներից մեկը և կարևորեց նկարչի յուրահատուկ ձեռագիրն ու արվեստի ընկալման հոգեբանական մոտեցումները:

Մեծ է նաև Ֆաենբերգ Սարգսյանի մանկավարժական փորձը: Նկարիչ մանկավարժը երկար տարիներ սերունդներին է փոխանցել արվեստագետի իր հմտությունները և սովորեցրել գեղեցիկն զգալու, արտահայտելու, գնահատելու գաղտնիքները, նրա շատ սաներ այսօր Հայաստանի նկարիչների միության անդամ են:

Մի հետաքրքիր ու հաճելի զուգադիպությամբ Նկարիչների միության հարկի ներքո նույն օրը ցուցադրվում էին նաև նկարչի ուսուցչի՝ Հովհաննես Զարդարյանի աշխատանքները: Ինչպես նկատեց Ա. Հակոբյանը. «Մի ադամանդ ծնում է մեկ այլ ադամանդ: Ֆաենբերգ Սարգսյանի աշխատանքներում այսօր մենք տեսնում ենք ամուր գծանկար, պինդ գույն, և այս մանրավազի միջոցով նկարիչը հասնում է նյութականացման գագաթնակետին»:

Դեկանը շնորհավորեց նկարչի հոբելյանը՝ նրան մաղթելով բեղուն վրձին ու իր արվեստի բերկրանքը մարդկանց պարգևելու նոր հնարավորություններ:

Նկարչին շնորհավորեց բանաստեղծ, նկարիչ Արևշատ Ավագյանը.«Գեղանկարչության վարպետներից մեկն է Ֆաենբերգ Սարգսյանը, ով աչքի է ընկնում իր ինքնատիպ ու յուրօրինակ արվեստով: Նա հայ մշակույթի շուրջը համախմբված արվեստագետների համար թանկ անուն է, նաև հետաքրքիր զրուցակից, ով ունի խոհական ու փիլիսոփայական մտածողություն»:

Կրթության միջազգային ակադեմիայի տնօրեն Սուրեն Մամիկոնյանը օրը կրկնակի տոն համարեց, քանզի անհատական ցուցահանդեսից բացի նաև գեղանկարչի հոբելյանն էր:

«Ֆաենբերգը ասելիք ունի, որ ներկայացնում է իր կտավների միջոցով, տարիների ընթացքում կաթիլ-կաթիլ ամբարել է կյանքի ուժը, շունչը, էներգետիկան, անց է կացրել իր պրիզմայով ու որպես կտավ ներկայացրել մեզ»:

Գեղանկարիչ Ֆաենբերգ Սարգսյանը հուզված էր. նա հակիրճ խոսեց տարբեր երկրներում ներկայացրած ցուցահանդեսների մասին, ուր մշտապես բարձր է գնահատվել իր արվեստը:

«Հայրենիքում և արտերկրում բազմաթիվ ցուցահանդեսներ եմ ունեցել, որոնց ընթացքում մշտապես կարմիր թելի նման նշվել է իմ ստեղծագործություններից հորդող մեծ էներգետիկան և խորհուրդը: Ուզում եմ այդ էներգիան ձեզ նվիրել, որ այն լինի բարի և լավ կյանքի համար զենք»,-ամփոփեց գեղանկարիչը՝ ցուցահանդեսի այցելուներին մաղթելով իր արվեստի կենարար շունչը ըմբոշխնելու նոր ու թարմ զգացողություններ:

Սրահում ներկայացված էին ամենատարբեր տարիների 55 ստեղծագործություններ, որոնք սակայն, գույների մատուցման մի ընդհանուր ներդաշնակության մեջ գրավիչ էին ու առինքնող: Առաջին հայացքից մուգ գույների մեջ ներծծված կտավների թվացյալ մռայլը նահանջում էր հետաքրքիր կարմիրի և դեղինի թափանցիկ լույսի ալեբեկումների ներքո՝ բացահայտելով գեղանկարչի հոգու և ներաշխարհի խորախորհուրդ ծալքերն ու մտածումները:

ՄԵՐ ԱՆՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ. ԱՇՈՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ

«ՆՐԱ ՎՐՁՆԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՒՅՆ ԻՐ ԼՈՒՅՍՆ ՈՒՆԻ»

Սեպտեմբերի 12-ին Հայաստանի նկարիչների միությունում բացվեց Մանկավարժական համալսարանի շրջանավարտ, նախկին դասախոս Աշոտ Առաքելյանի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:

Աշոտ Առաքելյանը Հայաստանի, Արցախի և Չեխիայի Հանրապետության նկարիչների միության անդամ է, Մորավա-Սլովակյան նկարիչների ասոցիացիայի և Հրադեց Կրալովեի գեղարվեստի միության անդամ: Վերջերս նաև ստացավ Արցախի վաստակավոր նկարչի կոչում:

Աշոտը ծնվել է Արցախում, 1992 թվականից ապրում և ստեղծագործում է Չեխիայում, որտեղ նկարելուց բացի, հանդես է գալիս Հայոց Ցեղասպանության, Լեռնային Ղարաբաղի և պատմության այլ խնդիրներին վերաբերող հոդվածներով, որոնք արդի հնչեղությամբ ընթերցողների կողմից լայն արձագանքներ են ստանում:

1966-1970 թվականներին նա սովորել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, իսկ 1971 թվականից մինչև 1992 թվականը՝ շուրջ 20 տարի, աշխատել նույն բուհում որպես դասախոս:

1970-ականներին Ա. Առաքելյանը Երևանում նկարչության դասընթացներ է անցել անվանի նկարիչ Հովհաննես Զարդարյանի, իսկ 1990-ականներին՝ Մոսկվայում, նկարիչ Միխայիլ Կոլումբեգովի մոտ:

Աշոտ Առաքելյանն ինքնատիպ ու տաղանդավոր նկարիչ է, ով բազմաթիվ անհատական ցուցահանդես է ունեցել Հայաստանում, Արցախում և Չեխիայում, նրա աշխատանքները ցուցադրվել են Չեխիայի Հանրապետության տարբեր

քաղաքներում՝ Պրահայում, Վսետինում, Օլոմոցում և այլուր, Սլովակիայում, Գերմանիայում, Բելգիայում, Իտալիայում և Նիդերլանդներում:

Տարիների ընթացքում Աշոտը գտել է իր ասելիքը գույների լեզվով մատուցելու իր ոճը, դեղինի ու կանաչի նրբերանգներից մերթ ընդ մերթ անցնելով մուգ ու վառ կարմիրի առկայծումներին: Նրա գեղանկարներից թափանցիկ ու մեղմ լույս է կաթում, որ խաղաղություն ու հանգիստ է պարգևում դիտողին, ստեղծում կենսական էներգիայի մաքուր ու գրավիչ դաշտ՝ առաջացնելով հարուստ զգացողություններ ու գեղեցիկ հույզեր:

Գեղանկարչի ստեղծագործությունների մասին հետաքրքիր բնութագրումներ են տվել հայ և արտասահմանյան անվանի նկարիչներ ու արվեստագետներ. նրանցից մեկն է չեխ նկարիչ Յոզեֆ Մաթիա Մինարիկը, ով գրել է. «Գեղանկարչական ոճերի ու կողմերի արդի խառնաշփոթության մեջ Աշոտ Առաքելյանի նկարները պատկանում են ֆիգուրատիվ անհատականություն արտահայտող արվեստի ստեղծագործական բնագավառին, որի մեջ խորհրդանշականը և գեղագիտականը դառնում են հասկանալի և համոզիչ...Աշոտ Առաքելյան գեղանկարիչը տեսարաններն ընտրում է ինքը և ընտրում է համաձայն իր ներքին զգացողության, ազատում է դրանք իրականության կապերից, իրական և նյութեղեն աշխարհից և դարձնում երևակայական ու ոգեղեն աշխարհ...»:

Սեպտեմբերի 12-ին Հայաստանի նկարիչների միությունում բացված ցուցահանդեսում Աշոտը ներկայացրել էր իր տարբեր տարիների կտավներից. ասելիքի խորություն, գույների աննկատ անցումներ, ճառագող լույս ու ստվերի խաղ և կենսական անսահման էներգիա, որ այցելուներին միանգամից տեղափոխում է նկարչի աշխարհը՝ տեսնելու նրանում կուտակված լիցքերի պարպումը...Մի խոսքով՝ գույների իսկական շքերթ ու հրավառություն...

Գեղանկարչի ստեղծագործություններն իրենց ելույթներում արժևորեցին ՀՀ նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը, բանաստեղծ, նկարիչ Արևշատ Ավագյանը և ուրիշներ:

Աշոտի ստեղծագործական, հոգևոր աշխարհի ու ընկալումների բացահայտման մասին էր գրող, գրականագետ Ֆելիքս Բախչինյանի «Աշխարհի արարումը լույսով է եղել» խոսքը.

«Նայում ես՝ նրա վրձնած յուրաքանչյուր գույն իր լույսն ունի: Ճիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուր մարդ՝ իր լույսն ունի:

Նայում ես՝ լույսը դուրս է հորդում գույների միջից ու ճառագում տարբեր ուղղություններով՝ ստանալով ծաղկաթերթի նշանակություն, դառնալով անդորրության ու խաղաղ գոյության գրավական, ոգու և կամքի ուրախություն...

Նայում ես՝ լույսը լույսի հետ է միավորվում, ու դուրս հորդում շրջանակից...

Նայում ես՝ դեպի քեզ է հոսում մի լույս, որը, տիրում է հոգուդ ու մխրճվում նրա խորքերը...

Նայում ես ու հասկանում, որ իսկապես, աշխարհի արարումը լույսով է եղել, որ աշխարհի յուրաքանչյուր անկյուն լույսի իր չափաբաժինն է ստացել: Հասկանում ես, որ հայոց բաշխված լույսը շռայլ է եղել»:

Եվրոպական իրականության մեջ ապրող հայը՝ Աշոտ Առաքելյանը, ժամանակի հարահոս շղթայում շարունակում է զրուցել կյանքի հետ՝ իր արվեստի երկրպագուներին նվիրելով սեփական հոգու լույսը՝ մաքուր ու՝ գունեղ, գեղեցիկ ու ճշմարիտ:

էջի նյութերը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԱՎԵՏԻՔ ՀԱԿՈԲՅԱՆ



ՆԱ ԿՇԱՐՈՒԱՆԱԿԻ ԱՊՐԵԼ ԻՐ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԱՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կյանքի 74-րդ տարում իր մահկանացուն կնքեց Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի դոցենտ Ավետիք Աբգարի Հակոբյանը:

Ավետիք Հակոբյանը ծնվել է 1944 թվականին Երևան քաղաքում:

1967-1972 թթ սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարի ֆակուլտետում:

1962-1977 թթ. դասավանդել է Երևանի № 68 դպրոցում:

1973 թ-ից Հայաստանի նկարիչների միության անդամ էր:

1977 թվականից մինչև այսօր աշխատում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում որպես կերպարվեստի ամբիոնի դասախոս:

Ա. Հակոբյանի հետաքրքրությունների առարկան գեղանկարչությունն էր, ուսանողներին դասավանդում էր գունանկար և կոմպոզիցիա՝ սիրով փոխանցելով իր գիտելիքները, փորձն ու հմտությունները: Քիչ է ասել, թե նա ուսանողակենտրոն գործունեություն էր ծավալում. ուսանողների համար նա բարեկամ էր, ավագ ընկեր, խորհրդատու: Դասախոս-ուսանող հարաբերություններում նա վաղուց էր կոտրել կարծրատիպերը, ստեղծել դասախոսի իր մոդելը: Նա տարբերվում էր իր ոճով, պահվածքով, կյանքի երևույթների հանդեպ սկզբունքային մոտեցումներով: Նրա խոսքի կոլորիտը ինչ-որ առանձնահատուկ հմայք ուներ, որ գրավում էր ուսանողներին:

Յոթ տասամյակի շեմը վաղուց հաղթահարած մանկավարժը իր նվիրումն ու սերն էր անմնացորդ փոխանցում սերունդներին: Այժմ էլ շարունակում էր սիրած գործը՝ միաժամանակ հպարտանալով ձեռք բերածով ու սաների հաջողություններով:

Դոցենտ Ա. Հակոբյանը մի շարք հրապարակումների հեղինակ էր, տարիների վաստակն էլ գնահատվել էր տարբեր պարգևներով:

1964 թվականից գեղանկարիչը մասնակցել է հանրապետական և միջազգային ցուցահանդեսների Ֆրանսիայում, Դանիայում, Բուլղարիայում, Գերմանիայում, Բալթյան երկրներում և այլուր: Նրա աշխատանքները ցուցադրվել են Հայաստանի տարբեր թանգարաններում, Մոսկվայի պետական թանգարանում և մասնավոր հավաքածուներում:

Կյանքը երբեմն անակնկալներ է մատուցում, և մահվան դեմ ամենայն ոք անզոր է... Վաստակաշատ ու սիրված դասախոսը կշարունակի ապրել իր կտավներում, գործընկերների և սաների հիշողություններում:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Առկա ուսուցմամբ սովորող ուսանողների 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են ս.թ սեպտեմբերի 3-ից մինչև 28-ը:

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Սիրված գրադանավարուհին

Երևանի քաղաքապետարանի Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կազմակերպվել էր հանդիպում Կալիֆորնիայի հայ գրողների միության անդամ, գրադարանավար Կիմա Կիրակոսյանի (Կ. Արմեն) հետ:

Կիմա Կիրակոսյանը, գրական կեղծանունը՝ Կ. Արմեն, ծնվել է Երևանում: Ավարտել է Երևանի Լևոն Արիսյանի անվան 127 դպրոցը, եղել է ոսկե մեդալի հավակնորդ:

Կիման ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Կուլտուրայի ֆակուլտետի գրադարանագիտություն, մատենագիտություն բաժինը: 1994 թվականին ավարտել է Լոս Անջելեսի Մաշտոց քոլեջի թարգմանության բաժինը, հաճախել մի շարք քոլեջներ ու ձեռք բերել տարբեր մասնագիտություններ:

Երևանում շուրջ 18 տարի որպես բաժնի վարիչ նա աշխատել է թիվ 1 տեխնիկական գրադարանում, այնուհետև տեղափոխվել Ավետիք Իսահակյանի անվան գրադարան՝ աբոնեմենտային բաժնում աշխատելով սեկտորի վարիչ:

1990 թվականին ընտանիքով տեղափոխվել են Լոս Անջելես: Արդեն 10 տարի է, ինչ նա տարրական դպրոցի գրադանավար է Լոս Անջելեսի դպրոցների միությունում: Լոս Անջելեսում շուրջ 10 տարի նա հայերեն է դասավանդել Դավթյան-Մարիամյան կրթական հաստատությունում, ինչպես նաև ունեցել է իր հեռուստաժամը՝ «Լիլիթ» խորագրով:

Կ. Կիրակոսյանը գրել սկսել է 1993 թվականից: Առաջին պատմվածքը՝ «Ուշացած խոստովանություն», որը լույս է տեսել «Կամարակ» շաբաթաթերթում և դարձել 2000-ին տպագրված պատմվածքների առաջին ժողովածուի խորագիրը, իսկ «Ներիր, հայրիկ» ձոն-նամակը գրական աշխարի մուտք գործելու նրա այցեքարտն էր: Նրա գործերը տպագրվել են «Կամարակ», «Փարոս», «Նոր կյանք», «Հայ կյանք» թերթերում և «Հայ միտք», «Նավասարդ», «Գարուն» ամսագրերում: Նա թարգմանել ու ընթերցասեր հասարակության դատին է հանձնել Բարբարա Դի Անջելիսի «Գաղտնիքներ տղամարդկանց մասին, որը պետք է իմանա յուրաքանչյուր կին», «Վստահություն գտնել և ապրել» հոգեբանական գրքերը, որոնք լույս են տեսել 2000, 2004 թվականներին: 2011-ին լույս է տեսել «Ապրել առանց հիշողությա՞ն, թե՞...» վերնագրով վեպը: 2018 թվականի հունվարի 13-ին նա ավարտել է իր վերջին՝ «Կարոտախտը բուժում չունի» խորագրով վեպը:

Կիման ունի մի շարք անտիպ ստեղծագործություններ՝ պատմվածքների, հոդվածների և հարցազրույցների ժողովածուներ, «Ուզում էի երեխա ունենալ» վիպակը:

Սա սիրված գրադանավարի ու մտավորականի անցած ուղին է՝ լի ստեղծագործական բեղուն պրպտումներով:

Միջոցառումը վարում էր դերասանուհի Գայանե Սամվելյանը, ով այնպիսի յուրահատկությամբ ներկայացրեց մտավորականին ու նրա գործունեությունը, որ կարծես հանդիսատեսը մի պահ էքսկուրս կատարեց Կ. Կիրակոսյանի գրական ու գրադարանային աշխարհում:

Միջոցառումը համեմվեց ելույթներով, իսկ ուսանողները ներկայացրին հատվածներ հեղինակի «Առանց հիշողության ապրե՞լ, թե՞...» գրքից՝ հանդիսատեսին տեղափոխելով հեռավոր եղեռնի տարիներ:

Գարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Լույս է տեսել ԳԱԳԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ «ԳԻՐՔԸ, ԳՐԱԴԱՐԱՆԸ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ» ուսումնական ձեռնարկը, որը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի և Հայաստանի ազգային գրադարանի գիտական խորհուրդների որոշումներով:

Գիրքը առաջին ուսումնական հրատարակությունն է՝ նվիրված ՀՀ պետական բուհերի զարգացման պատմության մեջ գրքի, գրադարանի և ընթերցանության ուսանելի դերի ու արդիական նշանակությանը, գրադարանային-մատենագիտական գործի զարգացման համակողմանի վերլուծությանը: Ֆոնդագիտության տեսանկյունից շրջանառության մեջ են դրվել բուհերի գրադարաններում պահպանվող հնատիպ և արժեքավոր գրքեր: Պատմատեսական և ուսումնամեթոդական աղբյուրներին տիրապետելու և գիտագործնական անհրաժեշտ խնդիրները լուծելու նպատակով հատուկ ուշադրություն է դարձվել ինքնաստուգման հարցերին, գործնական առաջադրանքներին, հանձնարարելի գրականության մատենագիտությանը և գրադարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշների հստակեցմանը:

Նախատեսված է գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթության համակարգի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների և պրակտիկ ոլորտի աշխատողների համար: Ձեռնարկից կարող են օգտվել նաև նրանք, ովքեր լրջորեն հետաքրքրված են գիտության, կրթության, մշակույթի հարցերով:

ՀՀ ԿԳՆ երաշխավորությամբ հրատարակվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դ. Տ. Վ. Թանգամյանի, ամբիոնի ասիստենտ մ.գ.թ. Ք. Ն. Ուզունյանի և նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Հ. Գ. Սարգսյանի կողմից կազմված «Առողջ սնունդ, առողջ սերունդ» ուսումնաօժանդակ ձեռնարկը:

Ձեռնարկի նպատակը աշակերտներին սննդային վարակների, ճիճվային և բակտերիային հիվանդությունների, թունավորումների, ալերգիաների, սննդի քիմիական և կենսաբանական աղտոտումը կանխարգելելու, անձնական և սննդի հիգիենան պահպանելու մասին գիտելիքներով զինելն է:

Ձեռնարկը ներառում է նաև եզրերի մատչելի բացատրություններ և գիտելիքների ստուգման համար նախատեսված թեստային առաջադրանքներ:

Այն նախատեսված է հանրակրթական հիմնական դպրոցի կենսաբանության ուսուցիչների, 7-րդ և 8-րդ դասարանների աշակերտների համար, սակայն կարող է օգտակար լինել նաև ուսանողներին:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 14.09. 2018 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ